ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է ներքին մրցույթ՝ Նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.14-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ համապատասխան մարմնի հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.14-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացվում են առցանց՝ https://cso.gov.am/internal-external-competitions հղումով՝ 2026 թվականի մայիսի 12-ից մինչև 2026 թվականի մայիսի 19-ը ներառյալ՝ մինչև վերջին աշխատանքային օրվա ժամը 24.00-ն:

<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>

1.դիմումը (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),

2. ինքնակենսագրությունը (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),
3. անձնագրի, նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման քարտ չի ներկայացնում, ապա պետք է ներկայացնի հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի լուսապատճենը),
4. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի (աշխատանքային պայմանագիր, աշխատանքի ընդունման մասին իրավական ակտ, աշխատանքային գրքույկ) լուսապատճենը,

6. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի լուսապատճենը,

7. լուսանկար՝ 3×4 սմ չափի:

Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերի լուսապատճենները արված բնօրինակից (օտարալեզու փաստաթղթերի դեպքում՝ նաև հայերեն պաշտոնական թարգմանությունների):

<u>Փաստաթղթերն առցանց ներկայացնելու ընթացակարգ.</u>

Քաղաքացիները հարցազրույցին պետք է ներկայանան անձնագրով և/կամ նույնականացման քարտով, կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ https://cso.gov.am/ միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին: Ծանոթանալով մրցույթի մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղնի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: Սեղմելով «Դիմել» ստեղնը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ», «Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել փոփոխությունները» ստեղնը:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում գտնել կոնկրետ պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» ստեղնով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ նաև օգտատիրոջ անձնական էջի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժնում կոնկրետ պաշտոնի համար հայտարարված մրցույթի տողում «Գործողություններ» ենթաբաժնի ներքո գրառումից, նշված հատվածում՝

ա) եթե ակտիվ է «Դիմել» ստեղնը, ապա դիմումը դեռևս գրանցված չէ,

բ) եթե ակտիվ է «Իմ դիմումը» ստեղնը, ապա դիմումը ներկայացված է Նախարարություն, և այն ուսումնասիրման փուլում է,

գ) եթե ակտիվ է «Խմբագրել» ստեղնը, ապա անհրաժեշտ է խմբագրել դիմումը՝ շտկելով փաստաթղթերի թերություններն ու սխալները, և կրկին ներկայացնել այն:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի» «Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի» «Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Փաստաթղթերը խմբագրելու համար անհրաժեշտ է այցելել «Անձնական էջ»-ի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժին, ընտրել կոնկրետ պաշտոնի համար հրապարակված հայտարարությունը, «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Խմբագրել» կոճակը սեղմել, կատարել փոփոխությունները և ներքևում նշված «Դիմել» կոճակի միջոցով դիմումը կրկին ներկայացնել:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մուտք» բաժին կամ https://hartak.cso.gov.am/ հղումի «Անձնական էջ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2026 թվականի հունիսի 4-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 267072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

<u>ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼՈՒՄ ՍՏՈՒԳՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք.
  https://www.arlis.am/hy/acts/204205/latest
- «Հանրային ծառայության մասին» օրենք.
  https://www.arlis.am/hy/acts/208569/latest
- «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» ՀՀ օրենք.
  https://www.arlis.am/hy/acts/187298/latest
- «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենք.
  https://www.arlis.am/hy/acts/209486/latest
- ՀՀ կառավարության 2006թ. «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման կարգը հաստատելու մասին» N 765-Ն որոշում.
  https://www.arlis.am/hy/acts/156387/latest
- Պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կոմպետենցիաները՝ տե՛ս պաշտոնի անձնագրում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

<<Փոփոխություն
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության գլխավոր քարտուղարի
2026թ. ապրիլի 13-ի N 18-Լ հրամանի>>

<<Փոփոխություն
Հաստատված է
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության գլխավոր քարտուղարի
2022թ. նոյեմբերի 23 -ի N 47-Լ հրամանի

Հավելված N3
Հաստատված է
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության գլխավոր քարտուղարի
2020թ. հունիսի 15-ի N 39-Լ հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, թույլտվությունների և լիցենզավորման վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

1.Ընդհանուր դրույթներ
1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, թույլտվությունների և լիցենզավորման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ **22-33.14-Մ2-1**): **1.2. Ենթակա և հաշվետու է** Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին: **1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը: **1.4. Աշխատավայրը** Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
2.Պաշտոնի բնութագիր **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները** **Գործառույթները՝** 1) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները. 2) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառներին վերաբերող սոցիալ-տնտեսական, զարգացման, հեռանկարային և ընթացիկ ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները. 3) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի մշտադիտարկում (մոնիթորինգ). 4) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառների պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքները. 5) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառներում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, կնքման և Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքները. 6) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառներում միջպետական համագործակցությունը. 7) Իրականացնում է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի

(ՀԸԳՀ) շրջանակում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում փոխգործակցությունը.

8) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցության շրջանակներում կազմակերպվող (հանդիպումներ, տեսակոնֆերանսներ, աշխատանքային խմբերի հանդիպում, միջկառավարական հանձնաժողովների նիստեր) միջոցառումների փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման աշխատանքները.

9) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա վիճակագրական ռեգիստրի վարման գործընթացի աշխատանքները.

10) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման աշխատանքները.

11) Իրականացնում է միջպետական, միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներին առնչվող միջոցառումներ.

12) Իրականացնում է բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ծագման դեպքում փոխադրման գործընթացի մասնակիցների կողմից իրականացվող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները.

13) Իրականացնում է ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) առաջարկությունների մշակման աշխատանքներ.

14) Իրականացնում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիային տրանսպորտով փոխադրումների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակման աշխատանքները.

15) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի գործունեության կառավարումը՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

16) Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է միասնական երթուղային ցանցի կազմակերպման աշխատանքները.

17) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու գործընթացի կանոնակարգման նպատակով առաջարկությունների մշակման աշխատանքները.

18) Իրականացնում է տրանսպորտային անվտանգության ապահովման բնագավառում միջպետական և միջգերատեսչական համագործակցությունը.

19) Իրականացնում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառներին առնչվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը:

Իրավունքները

- համապատասխան մարմիններից և ստորաբաժանումներից լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, նյութեր և այլ տեղեկատվություն հավաքագրելու, ինչպես նաև քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում.
- ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների և այլ տեղեկատվության հավաքագրում.
- պահանջելու միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման և Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի զարգացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար

համապատասխան մարմիններից և կազմակերպություններից լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, նյութեր, տեղեկանքներ, պարզաբանումներ և այլ տեղեկատվություն.

- Բաժնի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) առաջարկությունների և արդյունքային ցուցանիշների հավաքագրում.
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում տեղեկատվության փոխանակում.
- Հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի կազմակերպման գործընթացում ուղևորահոսքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում.
- ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու գործընթացի կանոնակարգման փաստաթղթերին ծանոթացում և լրացուցիչ նյութերի հավաքագրում.
- իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի մշակման աշխատանքներում համագործակցություն համապատասխան մարմինների և ստորաբաժանումների հետ.
- հրավիրում է խորհրդակցություններ, հանդիպումներ, քննարկումներ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

Պարտականությունները

- ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի, տեղեկատվության ուսումնասիրում.
- ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրում.
- ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական ռեգիստրի վարման գործընթացի աշխատանքների ուսումնասիրություն.
- Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության գործընթացի ուսումնասիրություն.
- սոցիալ-տնտեսական, զարգացման, հեռանկարային և ընթացիկ ծրագրերի նախագծերի, ինչպես նաև ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և բնագավառի պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների, ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտ-

ների, մոնիթորինգի իրականացման տվյալների ուսումնասիրում և մանագիտական եզրակացությունների տրամադրում.

- ընդհանուր օգտագործման ավտոմոբիային տրանսպորտով փոխադրումների գործունեության բարելավմանն ուղղված համապատասխան առաջարկությունների մշակում, համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրություն.
- ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի ուսումնասիրման, նախապատրաստման, այլ մարմինների հետ համագործակցության և Հայաստանի Հանրապետության պայմանագրային պարտավորությունների կատարմանն ուղղված փաստաթղթերի, գրությունների, հիմնավորումների, զեկուցագրերի մշակում, համաձայնագրերի տեղայնացմանն ուղղված անհրաժեշտ ուսումնասիրությունների հիման վրա առաջարկությունների ներկայացում.
- ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցության շրջանակներում անհրաժեշտ փաստաթղթերի, զեկույցների նախապատրաստում և համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա առաջարկությունների մշակում և ներկայացում.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության ստուգում.
- Նախապատրաստել և ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության կազմակերպման գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ.
- Ուսումնասիրել միասնական երթուղային ցանցի կազմակերպման, զարգացման և կատարելագործման վերաբերյալ փաստաթղթերը և ներկայացնել առաջարկություններ.
- բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ծագման դեպքում փոխադրման գործընթացի մասնակիցների կողմից իրականացվող գործողությունների ուսումնասիրում, առաջարկությունների ներկայացում.
- տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- Ուսումնասիրել ընդհանուր օգտագործման ավտոմոբիային տրանսպորտի գործունեության բարելավմանն ուղղված անհրաժեշտ տվյալները, մշակել և ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառում փոխգործակցության և օրենսդրության ներդաշնակեցման շրջանակներում միջազգային փորձի ուսումնասիրություն, օրենսդրական դաշտի բարեփոխումներին ուղղված առաջարկությունների ներկայացում.
- տրամադրում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառին առնչվող

տեղեկատվություն՝ Նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով.

- ստացված բողոքների, դիմումների ուսումնասիրում, հարցերի վերհանում և առաջարկությունների տրամադրում.
- իրավական ակտերի նախագծերի, եզրակացությունների, առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, մեթոդական պարզաբանումների և այլ փաստաթղթերի նախապատրաստում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

1	Ուղղություն	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ	
2	Ոլորտ	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԻՐԱՎՈՒՆՔ
3	Ենթաոլորտ	Մետալուրգիա և մեքենաշինություն	Ցամաքային և օդային փոխադրամիջոցներ	Միջոլորտային մասնագիտություններ	Տնտեսագիտություն	**Միջոլորտային մասնագիտություններ**	Կառավարում և վարչարարություն	Իրավունք
4	Մասնագիտություն	Տրանսպորտային մեքենաշինություն	Տրանսպորտային համակարգեր	Նյութագիտություն և նոր նյութերի տեխնոլոգիա		**Միջազգային հարաբերություններ**		042101.00.6 Իրավագիտություն *կամ 042101.00.7 Իրավագիտություն*

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Բողոքների բավարարում
5. Ժամանակի կառավարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.**2 Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային

խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: